





ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական,
և Մանկավարժական



Ի ԳՐԱԴԱՐԱՆԻ Ի — ԹԻԻ Զ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՔԵՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هنا را كيدا غو
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՅՈՐԷԼԵԱՆ



աւէրժ կեցցէ նախ
մեր վեհ. Սուլթանն, Որ
իւ Օգոստոսիառ տիտղոսին
համաձայն՝ քաղաքակրթող
գիտութեանց, գեղեցիկ
դպրութեանց եւ գեղար-
ուեստից վերին պաշտպանն է, իրեն յա-
տուկ հանձարեղ ու հանձարապաշտ ինքնա-
յորդոր բերմամբ, ամենքէս առաջ կանխեց
պատուել Մէճիտիէի չքանչանով, դեռ երեկ,
Օսմանեան Հայոց երկրորդ Յորէլարը՝ Պեր-
պերեան էֆէնտին, յանձին Անոր պատուե-
լով Հայ Ազգը որ ինքն ալ այսօր իր ժո-
ղովրդասէր վեհապետին օրինակելի դնա-
հատումէն ա'լ աւելի խրախուսուած, Պեր-
պերեան Լիկեոնը, հայ իմացականութեան
արժանի ականաւոր այդ Ոստանը արժա-
նաշուք վայելչութեամբ պատուել փութաց
Հիմնադրութեան քսանհինգամեակին հետ

և Անոր հանձարաւոր Հիմնադրին կրթական
Թէ դրական հանրօգուտ գործունէութեան
Յորէլեանը, իրեն նախագահ գլուխ ունե-
նալով Թուրքիոյ ընդհանուր Հայոց Պատ-
րիարքը, ունենալով հանդերձ ամեն կողմի
ճշմարտօրէն ու հաւատարմորէն կրթասէր
Թէ գրասէր Հայերը՝ ներկայ Թէ բացակայ,
իրենց ընդհանրական հիացմամբ, համակ-
րանօք եւ երախտագիտական զգացմամբ Թէ՝
ընծայարեւր, Թէ՝ պատուարեւր հանդիսական
ու ջերմեռանդ ծափահար:

* * *

Քանի որ մեր վեհ. Սուլթանն ինքն բա-
րեհաճեցաւ Ս. Առաջնորդաց յատուկ Պատ-
ուանշանով մեծարել օրուան Յորէլարն, իր-
բեւ Պետութեան եւ Ազգին պատուարեւր թէ
հանրօգուտ հանձարի, տաղանդի զտեալ
մարմնացումն, որպէս լինելուն համար, ար-
դէն կանուխէն ու սրտովին փափաքած էր,
Տիրասէր ընդհանուր Հայ ազգին հետ՝ Հան-
րապետական մասնաւորապէս ու սլաշածօրէն,
և իր բաղձանքը լիովին պատկուելուն հա-
մար կրկնապէս դո՛հ է. ապա բնական էր
որ կայսերական Թանկագին դնահատումէն
յետոյ, հանդիսապէս դնահատէինք և մենք
Հայերս, օրուան Յորէլար Պերպերեան

Վարժարանի հիմնադրութեան հետ՝ անոր մտային անմրցելի ու նախանձելի գերազանցութիւններովն հանդերձ :

Ո՞վ պատկառանք ու ներշնչեալ ոգւով մը չիօրեր ու չարտասաներ Պերպերեան Վարժարանի անունը, Վարժարան՝ ուր կըրթուած բոլոր ուսանողներն այսօր իրենց ընդունած բարւոք դաստիարակութեան և ընտրելագոյն կրթութեան շնորհիւ, ո՛չ միայն պատիւ ու պարծանք կը յաւելուն իրենց ընտանիքին, իրենց ազգին և ընդգրկած իրենց գործունէութեան ասպարէզներուն, այլ և իրենց Վեհապետին նկատմամբ անձամբ անբարեկի հաւատարմութեամբ միշտ փայլած են :

Ապա սրտագին ծափահարութեամբ կ'ողջունենք Պերպերեան Յոբելեանը զոր՝ անմահ Մամուրեանի առջինեկ Յոբելեանէն յետոյ՝ կատարելն ամենուս սիրական, այլ Համբազիսալի համար մասնաւորապէս նախասիրական փափաքն եղած էր :



ՊԱՏԻՍԻՍԻՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

Տէ՛ր ,

Թառաջիկայ Կիրակի . Հոկտեմբեր 28 . և Տօն Գիւտի Ս . Խաչի , Ամեն . Ս . Պատրիարք Հայրը պիտի պատարագէ Ս . Խաչի եկեղեցին , և Պերպերեան Վարժարանի Բսանեւհինգամեակին առթիւ հոգեհանգիստ պիտի կատարուի վասն հանգուցեալ ծնողաց եւ ամուսնոյն Հիմնադրի նոյն վարժարանին :

Ժամերգութիւնը պիտի սկսի առտու . Ժամը 1 ին : Քարոզը պիտի խօսուի Պատարագէն վերջ ի ժամ իբր 5 , իսկ շնորհաւորութիւնք պիտի ընդունուին յիշեալ վարժարանին մէջ ի ժամ 8 :

25 Հոկտ . 1901 , Իւսկիւտար ,

Ի դիմաց Յանձնաժողովոյ Քսանեհինգամեակի

Պ . ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Յ . ՅԵՐԱՏԵԱՆ

ՉՈՒՆ

ԱՌ

ՇՈՒՇԱՆԻԿ Պ . ՓԱՓԱՋԵԱՆ

Տեսած եմ անուրէ՛ հոյլ հոյլ ծաղիկներ ,
Դաւեալ ու հովսալ՝ գեղեցիկ զարդեր :
Մսած եմ անուրէ՛ ծաղկանց պարսեզներ ,
Հոսոսած անդէն անյոյ բուրումներ :
Տեսած եմ անուրէ՛ հարսեր , կուսաններ ,
Ծաղկով պսակած՝ իրենց գլուխներ :
Դիսած եմ անուրէ՛ պայծառ խորաններ ,
Եւ Սուրբ Խաչի մօտ՝ ծաղկահիւս փնջեր :
Լսած եմ անուրէ՛ տաղեր ու երգեր ,
Եւ ծաղկանց համար՝ պէս պէս գովեսներ :
Դիսած եմ անուրէ՛ գոյնգոյն գորգեր ,
Անթիւ , անհամար ծաղկեայ կերպասներ ,
Տեսած եմ անուրէ՛ հոսաւէս իւղեր ,
Ծաղկանց հիւքերէն՝ կազմած բալասներ :
Բնական ծաղիկն՝ տեսն գեղեցիկ ,
Վառած է այսօր՝ իւր սիրով մարդիկ :
Ո՞ր արհեստական՝ ծաղիկն իսկ անբոյր ,
Ունեցած է միշտ՝ աչաց հրապոյր :
Չեմ այսօր միայն՝ ծաղկանց մեծ համբաւ ,
Կան դեռ շատ պարծանք եւ պատիւ անբաւ :
Կան շատ անուրներ՝ կուսանաց , կանանց ,
Որք են անուրներ՝ գեղատես ծաղկանց :
Սոյն անուրներէն՝ Շուշան . Շուշանիկ ,
Է մի պատմական՝ անուր գեղեցիկ :
Որո՞ւն չէ ծանօթ՝ Սուրբ Գրոց Շուշան ,
Ողջախոն կենաց՝ տալար ու նշան :
Ո՞վ չը յիշէ՛ սրբուհին Շուշանիկ ,
Սուրբն Վարդանայ՝ գեղանի դասիկ :
Կը տեսնենք անո՛ւ , որ Շուշան անուն ,
Թե՛ ծաղիկ լինի եւ թե՛ մականուն ,
Ունի միշտ ներքոյ՝ նկարներ անբաւ ,
Ի՞նչ քիւր ծաղկանց մէջ խիստ շեղ համբաւ :
Չե՞ որ մեր Տէրն իսկ՝ զարդուց օրինակ ,
Հռչակեց Շուշան՝ ծաղիկն սպիտակ :
Ասաց՝ Սողոմոն չը հազաւ երբեք ,
Շուշանի նման զգեստ պերճ ու սեգ :
Ես իսկ ուրախ եմ , որ ունիմ Սանիկ ,
Չեմ ունիմ դրոշմած անուն Շուշանիկ :
Արդ ո՞վ Շուշանիկ , դասիկ գեղանի ,
Քեզ կը պատկանի այս երգ Շուշանի .
Թո՛ղ այժմ կարգան ծնողք քո բարի ,
Ազնիւրն Պետրոս , զգօն էպրուհի :

Իսկ երբոր մեծնաւ եւ այս ձօն կարդաս ,
Արդեօք դու որչափ պիտի գոհանաս ,
Որ Շուշանիկ ես՝ ներմակ քեւերով ,
Սնած զարգացած՝ մօր մաքուր կաթով ,
Իբեւ դեղձանիկ՝ փայլուն մազերով ,
Եւ Հայու աղջիկ՝ ծաւի աչքերով :

Պրուսա, 1897

Մ. Ե. Մ.



ՀԱՐՈՒՍՏ ԲԱՐԵԳՈՐԾՆ

ՈՒ ԱՂԳԱՏ ԵՐԱԽՏԱԳԵՏԸ

Ձմրան ցուրտ առտու մ'էր; աղքատ գործաւոր մը, Թօմա անունով, խրճիթին աջեւ ժողոված կտոր մը փայտը կը դիտէր :

« Ա՛հ, գոչեց՝ աչերը տխրութեամբ վեր վերցնելով, ցուրտն երթալով կ'աւելնայ եւ փայտս հետզհետէ կը նուազի: Ձմեռը չը պիտի կրնամ անցնել: Աստուած իմ, զթա՛ ինձ: »

Այն օրէն սկսեալ. — զարմանալի՛ բան, — փայտը չի պակսեցաւ, եւ Թօմա փառք տուաւ նախախնամութեան՝ որ այսպէս հըրաշքով օգնութեան կը հասնէր իրեն:

Արդարեւ Աստուած ուզեր էր որ մօտերը բնակող հարուստ այրիի մը որդին՝ Անտրէ, աղքատ գործաւորին տառապանքը տեսնէ ու աղօթքը լսէ: Այն օրէն սկսեալ, ազնիւ տղան, մօրը գիտութեամբն, ամէն գիշեր փայտի գէզին վրայ կը դնէր այնքան շերտ փայտ, որքան որ խեղճ Թօմա ցերեկն սպառեր էր: Թօմա տեսաւ այս բանս գիշեր մը լուսնին լուսով:

Գարնան սկիզբներն Անտրէ ճամբորդութեան ելաւ: Քանի մը տարի բացակայ մընալէ յետոյ վերադարձաւ:


Այուն էր: Ի՛նչ եղաւ իր զարմանքն, երբ պարտէղը մտաւ: Մեկնած ատեն շատ ծառեր կային հոն, իայց ամենքն ալ գէշ տեսակ պտուղ կուտային, իսկ հիմա բոլոր ծառերը խնձորներով, տանձերով եւ ընտիր սալորներով ծածկուած էին:

« Աս ի՞նչ բան է, ըսաւ Անտրէ զարմանօք: Այս բանս հրաշք է: »

Բայց մայրը պատմեց թէ՛ Թօմա, ուզելով նախորդ ձմեռն Անտրէի ըրած բարիքին համար իր երախտագիտութիւնն յայտնել, բոլոր ծառերը պատուաստել եւ խնամել էր:

Անտրէ՛ անմիջապէս ազնիւ գործաւորին տունը վազեց, շնորհակալ եղաւ պարտէղին ծառերը խնամելուն, եւ աղաչեց որ, կարօտութեան մէջ եղած ատեն, իրեն միայն դիմէ:

« Վասն զի, կ'ըսէր, քեզի նման երախտագէտ մարդուն ո՛րքան առատաձեռնութիւն ընեմ քիչ է: »



ՈՒՐ ՈՒԱԿԱՆԸ

Գրիգոր կէս գիշերուան մօտ գիւղացիի մը պարտէղը մտաւ, եւ հետը բերած երկու պարկը պտուղներով լեցուց: Ուզեց նախ տոպրակներէն մին տուն տանիլ:

Երբ զայն ունն առաւ եւ պարտէղին պատին երկայնքէն կ'երթար, լսեց որ գիւղին ժամացոյցը կէս գիշեր կը դարնէր: Ծառերու տերեւները շարժող գիշերային հովը տխուր ձայներ կը հանէր: Յանկարծ տեսաւ սեւ մարդ մը որ դէպի իր կողմ կուգար եւ կարծես թէ միւս պարկն ալ ինքը բերելով՝ կ'ուզէր իրեն օգնել:

Գրիգոր վախնալով պօռաց, կռնակի բեռը վար ձգեց եւ սկսաւ կրցածին չափ շուտ վազել: Սեւ մարդն ալ անմիջապէս տոպրակը թողուց, Գրիգորի չափ շուտ վազել սկսաւ, միշտ անոր հետ քով քովի երթալով եւ չի ձգելով որ քայլ մ'առաջ անցնի իրմէ: Մինչեւ որ պարտէղին պատը չի լինցաւ՝ սեւ մարդն ալ ընկերը չի թողուց:

Յաջորդ օրը, ամբողջ գիւղին մէջ Գրիգորի տեսած ուրուականին վրայ կը խօսէին: Ինքը պատմեր էր գլխուն եկածը, միայն թէ ըրած դողութեանը վրայ լուրջութեամբ անցեր էր: Բայց նոյն օրը գիւղապետը կանչել տուաւ գինքն ու ըսաւ,

« Այս գիշեր Ղուկաս եղբօր պարտէղէն պտուղ գողցեր են: Երկու տոպրակ գտնուեցան, որոնց վրայ անունդ գրուած է: Ասոր համար կը ձերբակալեմ՝ քեզի: Գալով այն սեւ ուրուականին, զոր տեսնել կարծեցիր, քու շուքդ էր, որ լուսնին լուսովը կ'ըրեար պարտէղին նոր ծեփուած պատին վրայ: »

Ձարիք գործողին սիրտը միշտ վախու մէջ է: Տերեւի մը շարժումը կ'ահաբեկէ անոր սիրտն, իր շուքէն անգամ վախնալով կը փախչի: Գող՝ սիրտը դող, ըսած են:


ԳԻՐՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Սիրելի՛ որդեակ,

Այս առաւօտ սենեակէդ ներս մտած ատենս, ձեռքդ գիրք մ'առած կարդալդ տեսնելով՝ շատ ուրախացայ. թէ որ այսպէս հաճութեամբ ունենիր կարդաւ՝ յիշաւի խիստ մեծ շահ մը կ'ունենաս եւ շատ վնասներէ զերծ կ'ըլլաս։ Մարդս՝ առանց գրքի ու ա-

մէն մարդ ուզածին չափ կրնայ անկից ունենալ եւ առնել, ու անոնց մէջէն երբէք բան մը չպակսիր. ամէն մարդ անով կը հարստանայ՝ իսկ գանձը միշտ մի եւ նոյնը կը մնայ։


Լաւ գիրքն արեգակի կը նմանի, որ իր ջերմութիւնն ու լուսաւորութիւնը բոլոր աշխարհիս կը հաղորդէ, ու իր ճառագայթներուն ո՛չ ջերմութիւնը եւ ո՛չ լուսաւորութիւնը կը նուազի։ Գիրք հեղինակողներն



առանց կարդալու՝ միայն իր բնածին լոյսին, իր սեփական մտքին առաջնորդութիւնն ունի. ասոր հակառակը, գիրք կարդալով իմաստնոց խրատներուն ու փորձառութեան հաղորդ կ'ըլլայ, անոնցմով կ'առաջնորդուի։ Ընթերցումը միտքը կը զարդարէ, լաւ եւ ուղիղ մտածել կը սորվեցնէ, դատողութիւնը կ'ուղղէ եւ բարքը կ'աղնուայնէ։ Ազէկ գիրքը ազնիւ ընկեր մը ու անսպառ հանք մ'է, ա-

օգտակար ճշմարտութիւններ սերմանած ու պատրաստած են, ու մենք առանց աշխատելու կրնանք հնձել ու վայելել։ Հիմա այս հունձքը շատ առատ է, փութա՛, քեզի պաշար փողուէ ու հնձելէ մի՛ դադարիր։ Բայց ասալ գիտնալու ես որ ամէն գիրք մի եւ նոյնը չէ, անոնց մէջ վնասակարն ալ կայ։ Լաւ գիրքը՝ գանձ, իսկ գէշն ալ թոյն է. առջիները մեզի բարի ու խմաստուն կ'ընեն,

խակ վերջինները կ'ապականեն. ուստի ջանա՛ գէշ, կրօնի, բարուց ու օրինաց դէմ գրուած գրքերէն զգուշանալ, ապա թէ ոչ բոլոր կեանքիդ մէջ գէշ ընթերցումին վընասակար հետեւութիւններն կ'զգաս: Եւ կ'զգաս ճիշդ ինչպէս հիւանդութիւնը բուժելու համար իմաստուն բժիշկին կողմէ ապսպրուած առողջարար դեղերն առնելու տեղ փնտրուած դեղերն առնողը կ'զգայ, մինչեւ իր մեռած օրը: Սիրենք մենք իմաստուն գիրքերը և գրքի պէս ու անկէ աւելի մեզի իմաստութիւն սորվեցնող Հանդէսները որոց մէջ ընտրելագոյնն է Հանրագիտակը, ճիշդ ինչպէս կը սիրենք մեր բարի ու իմաստուն ծնողքերը:



ԹՈՂՈՒՆՆԵՐՈՒ ԿՏՈՒՑՆ

Թռչունի մը դէմքին նշանակելի մասերէն մին կը կազմէ կտուցը: Թռչուն մը առանց կտուցի շատ տգեղ կ'երեւի: Կտուցն անոր դէմքին մէկ կարեւոր մասն է, անոր տեսակ մը շնորհալի ձև կուտայ. գեղեցկութեան պայմաններէն դուրս, մեծ օդատակարութիւն մ'ունի իրբեւ սննդառութեան գործարան:

Գրեթէ թռչուններու ամէն կարգին մէջ կը հանդիպինք այնպիսի կտուցներու որք նշանաւոր եղած են իրենց ձեւին և կազմութեան տարօրինակութեամբ:

Հաւազգիներուն մէջ է Հoffo Բofuի կոչ-

ուած Թռչունը. ասոր կտուցը մանգաղի մը ձեւն ունի, թուխ կապոյտ դոյնով, և գըծաւոր (Պատկ. 1): Բերուի եւ Պրազիլիոյ անտառներուն մէջ կ'ապրի, թռիչք ծանր է, ապուշ կերպարանք մ'ունի. չկրնար ինքզինքը պաշտպանել վտանգին առջեւ, որչափ իրեն մօտենալ ուզես նշան առնելու համար, փոքր շարժում մ'իսկ չ'ընէր՝ վտանգին առջեւէն փախչելու համար:

Մագլցողներու կարգին մէջ կը գտնուի Անի կոչուած ամերիկեան Թռչունը. ասոր կտուցն իր վրայ կը կրէ խոշոր ուռեցք մը, (Պատկ. 2) շատ բարակ մաշկով մը ծածկուած, իսկ ներքին մասը խուռչաւոր է: Այս թռչուններն արջառներու մօտ կ'ապրին միշտ. անոնց երբէք անհանգստութիւն չեն պատճառեր եւ իրենց այդ խուռչաւոր կտուցին շնորհիւ կը յաջողին անասուններուն վրայ թափառող միջատներն որսալու: Ճարտար որորդներ են, իրենց թռած միջոցին իսկ կը բռնեն թիթեռնիկները: Տարւոյն մեծ մասն այս որսով կ'ապրին, միայն Օգոստոսի ու Սեպտեմբերի մէջ պտուղներով կը սընանին:

Բարձրասրունքներու կարգին կը պատկանի Անարքոմը. ամերիկեան Թռչուն մ'է սա. ասոր կտուցին երկու մասերն ալ կամարածեւ են, իրարու քով եկած ատեննին պարապ խուռ մը կը ձեւանայ (Պատկեր 3): Հասակով կռունկէն փոքր է. կը սնանի ձուկով, գորտերով եւ թուլամորթերով, զորս իրենց պատեանէն ճարտարութեամբ կրնայ դուրս հանել: Ուղակա՛նջը իր թաթերուն մէջ կ'առնէ. քանի մ'անգամ կը դառննէ, և կտուցի զօրաւոր հարուածով մը կը բանայ պատեաններն ու դուրս կը հանէ անասնիկը: Ճնճղուկներու կարգին մէջ կը տեսնենք շատ հետաքրքրական կտուցներ ունեցող Թռչուններ:


Ամենէ նշանաւորն է Լօֆիփսը, որուն կտուցը խաչաձեւ է (Պատկ. 4): Եւրոպայի ու Ասիոյ հարաւային կողմերը կը բնակի. իր բարձրովը, սովորութիւններովն ու չար-

Ժողովներովը շատ կը նմանի թուրքական: Հաստ կտուց մ'ունի, որու երկու մասերն ալ կեռի ձեւ ունին ու զիրար կը կտրեն խաչաձեւ: Շոճիներու վրայ կ'ապրին, իրենց կտուցին միջոցաւ ծառերն ի վեր կը մագլցին թուրքական նման եւ ճիւղերէն կը կախուին գլուխնին վար: Պիստակը, չազանակը, ընկոյզը իրենց սիրական սնունդը կը կազմեն: Մեծ ճարտարութեամբ կը կոտրեն ընկոյզները, պիստակները, իրենց կտուցին հարուածներուն հանած ձայնը բոցի մը ճարձատիւնին կը նմանի:

Մաշկոտանիներուն մէջ է Բեմֆօքսը որ նեղոսի ափունքներուն վրայ կը բնակի. ասոր կտուցները մկրատի մը երկու կտրոցներուն կը նմանին. միւսնոյն ձեւն ու կազմութիւնն ունին: Գետին մէջ եղող որդերով, թրթուրներով կը սնանի, եզերքի խիճերը կը ժողվէ, խեցեմորթներուն վրայ կը նստէ մինչեւ որ կենդանիին խեցին կտորի, այն ատեն անմիջապէս անոր վրայ կը յարձակի եւ կտուցովը թուլամորթն իւր խեցիէն դուրս կը հանէ:

Կարելի չէ մոռնալ Մաֆաոկո կոչուած թռչունն որ խոշոր եւ եռանկիւնաձեւ կը տուց մ'ունի: Սրածայր է եւ ամենէն մեծ դերը կը կատարէ իւր բոյնի շինութեան մէջ: Իւր կտուցովն է որ հողին մէջ փոսեր կը բանայ 2—3 մէթր երկայնութեամբ. էգն ալ կը մասնակցի իւր այս աշխատութեանը, եւ այդ միջոցին իւր կտուցն աւելի կը զօրանայ ու անոր վրայ կը կազմուին սրածայր կեղեւներ որոնք իւր բոյնի շինութեան վերջ կ'իյնան:

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ



ՓՈՒՐԻԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԲԵՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՉԻՆԵՐՆ ԵՒ ՄՈՆՂՈՒՆԵՐԸ

Չինական փաղափարքութեան բարձր հրմուքիւնը. — Չիները, Երկնային-Կայսրութեան, կամ, ինչպէս կ'ըսեն տաիւսին, Մի-

ջալայրի Կայսրութեան բնակիչները, հարկը հազար տարիէ ի վեր գոյութիւն ունեցող ժողովուրդ մը կը համարին իրենց ազգը: Քրիստոսէ գրեթէ 2600 տարի առաջ իրենց պատմութիւնը շարունակեալ տարեգրութիւններ կ'ունենայ:

Չի գիտցուիր թէ մարդկային այս ընկերութիւն ե՞րբ եւ ի՞նչպէս կազմուեցաւ որ չորս հազար տարիէ ի վեր առ նուազն պահած է ցեղային մի և նոյն բնաւորութիւնը. գործնական հանճարի տէր, բոլորովին երկրով զբաղած և խիստ քիչ՝ երկինքով, խելքը միտքը տուած է իր կեանքին բարօրութեան օգտին գործածել ինչ որ հողը կրնայ արտադրել, ու ճերմակ ցեղին մեծամեծ պատուածութեանց տեղ ամբողջովին մարդկային բարոյական մը կ'դնէ: Շուկ կայսրն արդէն (2300 նախ քան Յ. Ք.) հաստատած էր ինկզ պարսէր կոչուած պատուիրանը, այսինքն չինական հնգաբանայն. պարտք հօր և դաւակաց, պարտք իշխանին եւ հպատակաց, պարտք ծերերու և տղաքներու, ամուսիններու, վերջապէս բարեկամներու, և կը բաժնէր կայսրութիւնը նահանգներու, դաւառներու, վիճակներու եւ քաղաքներու:

Առաջին իշխանապետութիւններ. — Քրիստոսէ երկու հազար տարի առաջ Չինական կայսրութիւնը որ մինչեւ ան ատեն ընտրական էր, ժառանգական եղաւ, թէեւ երկրին մեծամեծները տաիւսին կրնային մեռած իշխանին զաւակներէն կարողագոյնը ընտրել: Եւ սկսաւ առաջին իշխանապետութիւնը այն է Հիանիներու ցեղինը, որ վերջապէս չորս դար յետոյ վատթար իշխանութեան մը փոխուեցաւ:


Քուկ-Չեու (Կոնփիւկիոս) պանծացուց երկրորդ ցեղին, այն է Շանկերուն, իշխանապետութեան հիմնադրին առաքինութիւնները: Այս իշխանը սովի մը ժամանակ երկնից բարկութիւնն իջեցնելու համար հրապարակաւ խոստովանեցաւ ժողովուրդին առջև իր մեղքերը: Իր յաջորդներէն շատեր բարձրագոյն բարոյականութեան այս օրինակին հետեւեցան յաճախ: Իր նախարարներէն մին օր մը իրեն խիստ յանդիմանութիւն մը ըրած էր. իր առջեւ կանչեց զայն ու ըսաւ. « Խօսքդ իմաստունի խօսք է. բայց կ'ըսեն թէ իմաստունին սիրտը եօթը ծակ ունի,

կ'ուզեմ փորձով հասկնալ ու աչքովս տեսնել այդ եօթ ծակերը» . և կուրծքը ճեղքել բանալ տուաւ : Իր աւատապետ իշխաններէն յաղթուելով ժողովեց իր բոլոր հարստութիւնը ապարանքի մը մէջ, կրակի տուաւ զայն ու ինքզինքը նետեց բոցերուն մէջ (Քս . է առաջ 1122) :

Ձեռներու ցեղին իշխանապետական թագաւորներն այնքան շատցան որ անոնց թիւը բարձրացաւ մինչեւ հարիւր քսանի : Չինաստան յայնժամ եղաւ ճշմարիտ աւատապետութիւն մը որ առաջ բերաւ սոսկալի ա-

եալն , այրեց գրքերը եւ հալածեց գրագէտները :

Հաներու իշխանապետութեան օրով՝ (202, Քս . է առաջ — 226 է վերջ) , Չինաստան իր մեծութեան գագաթնակէտը հասաւ : Իր բանակներ արշաւեցին մինչեւ Կասպից ծով , և Արեւելեան ծովուն եզերաց վրայ եղած բո-




Չինական մեծ պարիսպը



Մոնղոլեան ցեղ

Նոր ժողովուրդներ անոր հնազանդեցան :

Մոնղոլաց արեւանգն ասնելեհեհեհորդ դարուն . — Չինական մեծ պարիսպէն մինչեւ Կասպից ծով տարածուող տափաստաններէն (steppe) ելան այլ և այլ թուականներու մէջ վայրենի հրոսակներ , և խուժեցին աջ ու ձախ , Հռովմէական ու Չինական կայսրու-



Չինաստանի Բեքին մայրաքաղաքին ղուռներէն մին

նիշխանութիւն մը , որուն վերջ տուաւ իշխանապետներէն մին :

Չինական կայսրութեան ամենամեծ զօրութեան բուականը . — Նոր իշխանապետութիւնը հաստատեց մեծ կայսրութիւնը որտիրող Յին կամ Չին ցեղին անունով Չինական կոչուեցաւ . (267 Ն . Ք .) : Ասոր պետը Չին-Շի-Հօանկ թաթարաց արշաւանքներն ու ասպատակութիւններն արգիլելու համար շինեց չինական հռչակաւոր մեծ պարիսպը որ երկու հազար հինգ հարիւր քիլոմէդր երկայն է : Բայց որպէս գի ամէն ինչ իր տիրապետութենէն սկսի , ուզեց ջնջել անց-

թեանց վրայ , որոց երկուքին մէջ կը բաժնուէր ծանօթ աշխարհին ամենամեծ մասը : Այսպէս Հոներն Եւրոպա արշաւելով պատճառ եղան Գերմանական արշաւանքին որ կործանեց Արեւմտեան կայսրութիւնը , եւ ուրիշ Մոնղոլներ ալ Չինաստան արշաւելով

անդամատեցին զայն եւ աշխարհակալեցին մինչեւ Կապոյտ գետ :

Զինասան այցելող առաջին եւրոպացիները . — Եկն հարստութեան առաջին նախահայրը՝ Քուպլայ (1279) Պուտոյայականութիւնը ընդունեց . այս կրօնքս Հնդկաստանէն գալով՝ հարիւր յիսուն միլիոն հաւատացեալ ունեցաւ : Մարքո Բոլօ վենետիկցին, տասնեւեօթը տարի ասոր մօտ կեցաւ : 1368ին չինական Մինկ հարստութեան իշխանութեան ժամանակ, Բորթուկալցիք հաստատուեցան Մաքաօի մէջ (1514) :

Մոնղոլներուն նոր կայսրութիւնը Կեդրոնական Ասիոյ եւ Հնդկաստանի մէջ՝ Ժ. դարուն . — 1370էն 1415, Ճինկիզկանի սերունդին, մականուանեալն Թիմուր կամ Կաղ . կ'աշխարհակալէր Պարսկաստանի, Հնդկաստանի ու Փոքր Ասիոյ, եւ իր մարդիկը դէպի Չինաստան կը մղէր, մինչեւ որ մահը կասեցուց այս չարաշուք ծերունի հրոսպետին՝ երկրակալութիւնները իր շնորհալի իշխանութիւնը բաժնուեցաւ ու քիճացաւ : Մինակ, Հնդկաստանի մէջ իր գոյութիւնը շարունակեց Լէնկթիմուրեան իշխանութեան մէկ բեկորը, Մեծ Մողոլին իշխանութեան անունով, սր 19րդ դարուն մէջ Անգլիացուց ձեռքով անհետացաւ :

Զինասան արդի ժամանակաց մեջ . — Մինկերու չինացեղ իշխանապետութեան օրով չինական բարքերն ու հաստատութիւններ վերստին գտան իրենց պայծառութիւն, եւ երկիրը նորէն շէնցաւ ու բարգաւաճ վիճակը վերստացաւ : Սակայն Թաթարներու ցեղը՝ 1644ին, յաջողեցաւ վերստին տիրել Չինաստանի : Սիբերու կամ Զիներու իշխանապետութիւնը զոր հաստատեցին Մանչու Թաթարները մինչեւ հիմա կը տիրէ Բէքինի մէջ : Զիներու վրայ այսօր տիրող Թադաւորացեղը Թաթար է, բուն Զինացի չէ : Եւ ասոր համար է որ, ինչպէս 1860—62 Տաի-Պէնկերը՝ նոյնպէս 1900ին վերջերը Պօքսըրները՝ որոնք Զինացիներ էին, ուղեցին Թաթար իշխանապետութիւնը ջնջելով բուն Զինական ցեղն երկնային կայսրութեան աթոռը բազմեցնել :

(Շար.)



ՊԵՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Մանկավարժութիւնը (pédagogie) դաստիարակելու գիտութիւնն ու արհեստն է :

Դաստիարակութիւն ըսելով ալ կը հասկնանք մանկութենէն սկսելով կրթել, կազմել մարդը, այսինքն զարգացնել անոր փիլքական, իմացական ու բարոյական կարողութիւնները, հասցնելու չափ գինքը այն վիճակին, որով կարող լինի ապրած միջավայրին մէջ վայելած իրաւունքները օգտակարապէս գործածել, եւ նոյն միջավայրին իրեն հարկադրած ընդհանուր կամ մասնաւոր պարտքերը բոլորն ալ կատարել խղճի մոռօք :

Դաստիարակութեան նպատակն է մարդն երջանիկ ընել, եւ մարդկային երջանկութիւնն ալ կը կայանայ իր բոլոր պարտքերը կատարելու գոհունակութեան մէջ :

Այս սահմաններէն կը հետեւի թէ Մանկավարժութեան պատմութիւնը կ'սկսի մարդն աշխարհի վրայ երեւնալուն հետ : Տարակոյս չիկայ թէ Ադամ-Եւայէն սկսեալ՝ մարդիկ իրենց ծնած զաւակները մեծցնելով խնամեցին եւ իրենց գիտցած բաները, փորձառութիւններն անոնց հաղորդեցին՝ իրենց ստացած հաւատալիքներուն, կազմած բարքերուն, սովորութեանց ու իրենց նկարագրերուն հետ : Սակայն շատ դժուարին է քայլ առ քայլ հետեւիլ այն ջանքերուն զորս մարդ ըրած է իր կրթութեան համար՝ սկսեալ իր ստեղծագործումին առաջին օրէն : Նախապատմական մարդոց կրթական եղանակները կրնան բաղդատուիլ այսօրու անվայրի ցեղերուն ունեցած վարմանց հետ : Կրթութեան պատմութիւնը կ'սկսի՝ երբ մարդիկ վայրի կենդանիներու պէս քարայրներու մէջ ապրելու շրջանը կ'անցնեն, տուն տեղ կը չինեն . ընտանիք կը կազմեն, ցեղերն ալ ազգերու վերածուելով քաղաքներու մէջ հաստատուն բնակութիւններ կ'ունենան : Այն ատեն կ'սկսին կրթական ջանքեր ընել մարդիկ իրենց նախնական վիճակին մէջ, ուր ո՛չ ընտանիքը, ո՛չ ցեղը կազմակերպուած էին, իրենց միակ աշխատանք ունէին անձնապահպանութիւնն եւ իրենց նմանն առաջ բերելը : Բնական է անոնց առաջին դասերն եղան իրենք զիրենք

անուցանելն ու վտանգէ զգուշացնելը:

Մարդ իր մէջ տիրող բնազդումէն և զինքը վարող իմացականութենէն մղեալ՝ ապրելու և աւելի լաւագոյն ապրելու բերումն ունի: Մարդկային բնութեան մէկ տիրական օրէնքն է որով մարդ կ'ուզէ որ վայելած բարիքէն կատարելապէս գոհացած չլինի, և մշուի փնտռել աւելի լաւագոյն բարիք մը որ կը դադրի իբր այդ ըլլալէ՝ ձեռք բերուածին պէս:

Եւ որովհետեւ այս լաւագոյն բարիքները ձեռք բերելու համար մարդիկ ըրած են ջանքեր, ունեցած են փորձառութիւններ, ստացած են ծանօթութիւններ, շտեմարանած են հմտութիւններ զորս իրենց յաջորդներուն հաղորդելու պէտքէն ծնած է դաստիարակութիւնը:

Սկիզբէն ի վեր աշխարհի վրայ եկող գացող ազգեր որք շատ քիչ ունեցան քաղաքակրթութիւններ՝ այսինքն գիտութիւններ, դպրութիւններ՝ արուեստ մշակելու ջանքեր ըրած են, իրենց զաւակները կրթելու հոգեր ունեցած, հաստատութիւններ ալ հիմնած են: Սակայն այդ բոլոր ազգերու մէջ ամէնէն աւելի դպրոցական կազմակերպութեանց մասին վաւերական ծանօթութիւններ ունեցողներն են Յոյները, Հռովմայեցիներն ու Եբրայեցիները: Թէեւ ասոնք ալ իրենցմէ առաջ և աւելի զարգացեալ հին դրացի ազգերէ ընդունած են իրենց թէ՛ մտաւոր, թէ՛ դպրոցական նախասերմունքն ու հարկաւոր ծանօթութիւնները: Ուստի Բոլ Վէնսան այդ երեք ազգերէն կ'սկսի իր Մանկավարժութեան Պատմութիւնը, զոր քաղելով հին թէ նոր մանկավարժներու գործերէն, հմտալից ու կանոնաւոր ձեւով մը հաղորդած է: Ըստ այնմ եւ մենք նոյն կարգաւ կը հաղորդենք մեր ընթերցողաց մարդկազմելու, մարդ կրթելու գիտութեան ու արուեստին Պատմութիւնը, որ բոլոր պատմութեանց մէջ թէ՛ կարեւորագոյնը, թէ՛ շահեկանը, և թէ՛ չինիչն ու բարոյացուցիչն է: Ո՛վ որ ծնողք է ու զաւակ ունի, ո՛վ որ ուսուցիչ է ու աշակերտ ունի, ո՛վ որ աշակերտ է ու դպրոց կ'երթայ, պէտք է կարդան իրենց ունեցած և առած բոլոր հմտութեանց լրացուցիչն եղող Մանկավարժութեան Պատմութիւնը, որ մաս առ մաս պիտի հրատարակուի Հանրագիտակի մէջ:

ՊԱՅՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՅՈՅՆԵՐԸ

ՍՊԱՐՏԱ, ԼԵԳՈՒՐԿՈՍ

Իր գիտական, իմաստասիրական, հմտական եւ կրթական գործերովն հանրածանօթ Ֆրանսացի մատենագիրը՝ Վարդապետսուքիւնի Դասիարակութեան Ի Ֆրանսա անուն գրքին սկիզբը մէջ կ'ըսէ ժողէֆ Սիմոն մանկավարժագիր հեղինակին խօսքերը, որք կը լուսարանեն լաւագոյն կերպով Յունական, Հռովմէական եւ Եբրայական դաստիարակութեան եւ անոնց դպրոցական վարդապետութեանց, դրութեանց, մէթոտներուն, կարգապահութեանց պատմութիւնը:

Բոլոր ազգաց մէջ՝ դաստիարակութեան արուած ուղղութիւնը կախումն ունի այն գաղափարէն, զոր կը կազմեն կատարեալ մարդուն նկատմամբ: Հռովմայեցոց համար կատարեալ մարդուն տիպն է, կորովալիք ղինուորականը՝ յոգնութեան տոկացող, կարգապահութեան հլու: Աթենացոց համար ա՛յն մարդն է որ յանձին կ'միացնէ իմացական կատարելութեան եւ ֆիզիկական կատարելութեան բարեվայելուչ ներդաշնակութիւնը: Եբրայեցոց համար՝ կատարեալ մարդը՝ բարեպաշտ ու առաքինի մարդն է՝ կարող հասնելու Եբրայեցի ժողովուրդին այն իտէալին զոր Աստուած ինք գծած է սա բառերով. « Եղբրուք սուրբ, նման ինձ, Յաւիտենականը, Սուրբ եմ ես »:

Մի և նոյն գաղափարէն ազդուելով եւ Բոլ Սուգէ, Ժ-Ջրդ դարու Մանկավարժ Մասեմագիրներ անուն գրքին մէջ հետեւեալ կերպով կը խօսի:

Եթէ ճշմարիտ է թէ դաստիարակութիւնը կը ներգործէ ժողովրդի մը վրայ իր ազդեցութիւնով, որուն արդիւնքներն ո՛րքան ալ ուշ կամ դանդաղօրէն երեւին, այսու ամենայնիւ ապահովապէս կ'արգասաբերին, նմանապէս ճշմարիտ է որ դաստիարակութեան վարդապետութիւնք եւ անոնց գործնական

հրահանգներ ժամանակին ու ընկերական միջավայրին դրոշմը կը կրեն: Մէն մի ժամանակամիջոցի տիրող հաւատալիքները, բարքերը, սովորութիւնք, տեսնելու ու զգալու կերպերը ամբողջապէս բացատրուած են գործածութեան մէջ եղող եւ հասարակօրէն ընդունուած դպրոցական կանոնագրքին մէջ: Հոն կ'տեսնենք թէ հաւատալիքներու, բարուց, սովորութեանց, տեսնելու և զգալու կերպերուն մէջ ներմուծուած ամեն փոփոխութիւն կատարուած են կրթական վաղեմի դրութեան մը դէմ բողոքելով եւ դպրոցներու ինչպէս մէթոտներն ու ծրագիրները նոյնպէս եւ անոնց կարգապահութեան եւ տնտեսագիտական կանոնները վերստին աչքէ անցնելով, սրբագրելով ու փոփոխելով զանոնք:

Մարդկութեան բարոյական պատմութիւնը գրուած է հանրային դաստիարակութեան պատմութեան մէջ. միայն սա տարբերութեամբ որ յայտնուած գաղափարին և իրողութեանց մէջ գործադրուած գաղափարին, նոր զգացուած պէտքին եւ գոհացեալ պէտքին մէջ քանի մը ատեն անցնելէն, ուշանալէն վերջը կը գրուի: Ասոր ալ պատճառն այն է որ՝ դաստիարակութեամբ կը կազմուին մարդեր. սակայն բոլորովին տարբեր եւ ուրիշ է այն կերպ՝ որով զանոնք կը կազմեն մարդուն եւ անոր ինչ բանի սահմանուած լինելու մասին իրենց ունեցած գաղափարին կամ ըմբռնումին, հետեւելով այն ձեւին որով մարդուն մէջ իրենց խելքով կ'նկատեն երկու բան. բնութիւնն ու միտքը:

(Շար)



ԺՈՂՈՎՐԴՈՅ ԲԱՐԵՇՐՁՄԱՆ

ՀՈԴԵՐԱՆԱԿՆԵՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Թէ որքան սխալ ու աղետալի եղած է Հաւասարութեան գաղափարը

Ժողովրդոց հաստատութիւնները վարող գաղափարները շատ երկար ատենի պէտք ունին որպէսզի բարեշրջուին: Անոնք շատ և շատ ուշ կը կազմուին, նմանապէս ալ շատ ուշ կ'անհետանան:

Մինչդեռ իմաստուններու համար երկար ատեն է ի վեր յայտնի միութիւններ եղած են ատոնք, բայց իբրեւ անվիճելի ճշմարտութիւններ կը մնան ամբողջ մտքին մէջն եւ կը շարունակեն իրենց սխալ ու աղետալի ընթացքն ազգերու խորին խաւերուն մէջ:

Եթէ դժուարին է նոր գաղափար մը հարկադրելի ընել, ո՛չ նուազ դժուարին է նաեւ հին գաղափար մը արմատախիլ ընել: Մարդկութիւնը միշտ մեռեալ գաղափարներու և մեռեալ աստուածներու կառչած է յուսահատօրէն:

Մէկ ու կէս դարէն աւելի է որ բանաստեղծներն ու փիլիսոփաներն՝ որոնք շատ աւելի տգէտ ու շատ սխալ ըմբռնումներ ունէին մարդուն նախնական պատմութեան, անոր մտային յօրինուածքի զանազանութեան և ժառանգականութեան օրէնքներուն նկատմամբ՝ մէջտեղ նետեցին անհատներուն ու ցեղերուն հաւասարութեան սխալ գաղափարը:

Ժողովուրդներու համար չափազանց չլացուցիչ ու հրապուրելի այս գաղափարը վերջապէս պիտի մը հաստատուեցաւ անոնց մտքին մէջ: Աղետալի գաղափարը հիմնովին վեր ի վայր չըջեց հին ընկերութեանց շէնքերը, ծնունդ տուաւ ամէնէն աւելի ահարկու յեղաշրջումներու և արեւմտեան աշխարհը ձգեց շարք մը այնպիսի սաստիկ դժբաղդներու և ցաւազար խակագործութեանց մէջ որոնց վերջն ուր հասնիլն անկարելի է նախատեսել:

Արդարեւ կային ազգերն ու ցեղերը իրարմէ զատող ինչ ինչ ակնյայտնի անհավասարութիւններ, որոց դէմ անկարելի էր լրջօրէն չի բողոքել, բայց շատ դիւրին հասկցուեցաւ թէ այս անհավասարութիւններ լոկ տարբեր ու զանազան դաստիարակութեանց հետեւանքներն էին. թէ ամէն մարդեր կը ծնին հաւասարապէս իմացական ու բարի, և թէ միմիայն կրթական հաստատութիւններն զանոնք յոռեշրջած էին: Այս յոռեշրջումի դարմանն ալ նոյն իսկ այն ատենէն շատ պարզ բան մ'էր. բարեկարգել կրթական հաստատութիւններն եւ միեւնոյն տեսակ կրթութիւն մը տալ բոլոր մարդոց: Ո՛չ ապաքէն այսօր դաստիարակութեան ու բարեկրթութեան շնորհիւն է որ

կը վայելենք. հին օրերէն աւելի տարբեր երջանիկ ու խաղաղ բարօրութիւն մը, թէի լինի այն յաճախ փոթորկալի, սակայն նոյնատեսակ դաստիարակութեան ու կրթութեան շնորհիւ նուազ աղետալի քան որքան կը լինէր մեր արդի ժամանակէն աւելի տեղեւոր ու նախապաշարեալ ժամանակներու մէջ:

Գիտութիւն մը՝ այն է աւելի զարգացկալ Հոգեբանութիւնը ճշմարտօրէն ապացուցած է հաւասարապաշտ տեսութիւններու կամ գաղափարներու ընդունալնութիւնը, և մատնանիչ բրած է թէ՛ մտային այն խորվիրապ անդունդը՝ զոր անցեալը պեղած, ստեղծած է անհատներուն ու ցեղերուն մէջ, կարելի չի պիտի ըլլար լեցունիլ՝ բայց միայն գոյացումը շատ երկարատեւ եղող մտային ժառանգական հաւաքումներով: Արդի Հոգեբանութիւնն իր կարգ մը փորձառական նորալոյս դասերէն զատ՝ սա եւս ապացուցած է թէ կրթութիւնն ու դաստիարակութիւնն որոնք կը պատշաճէին ինչ ինչ անհատներու և ինչ ինչ ժողովուրդներու, կրնայ վնասակար ըլլալ ուրիշներուն:

Բայց փիլիսոփաներու ձեռքը չէ ոչնչացնել ժողովուրդներու մտքի աշխարհին մէջ հաստատուած գաղափարները, այն օրն երբ կը հասկնան անոնց սխալ ու վնասակար ըլլալը: Նման յորդած գետի մը որու ո՛ր և է թումը կարող չէ դիմադրել, գաղափարն իր աւերիչ ու ահարկու զերը կը կատարէ:



Դ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Թ Ի Ի Լ Վ Է Ր Ն



ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ՂԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Բ.

Այս սենեակը ճշմարիտ թանգարան մըն էր: Հանքային աշխարհի բոլոր նմոշները դասակարգուած և թուագրուած՝ ամենա-

մեծ խնամքով պահուած էին երեք խուռմբերու բաժնուած, բռնկող, մետաղական և քարային հանածոներ:

Շատ աղէկ կը ճանչնայի երկրաբանական գիտութեան այս մանր մունր ներկայացուցիչները. քանի՜ քանի անդամներ արդեօք, տարեկից ընկերներու հետ զուարճանալով ժամանակ կորսնցնելու տեղ կուգայի կը մաքրէի այս գրաքարերը, ածխաքարերը, հանքածուխները, փայտաքարերը, կիզահողերը. Հապա կուպրը, ռետինները, գործարանաւոր թթուները, որու վրայ փոշիի հատիկ մը նստելու չէր: Հապա մետաղները, երկաթէն սկսեալ մինչեւ ոսկին, որու յարաբերական արժէքը մեզի համար կարեւորութիւն չունէր: Հապա բոլոր միւս քարերը, որոնցմով կարելի էր փէօնիկզկրասի մեր տունին պէս ուրիշ հատ մըն ալ շինել, նոյն իսկ սենեակ մ'ալ աւելի՝ ինծի համար:

Բայց սենեակ մտած ժամանակս այս հրաշալիքներուն վրայ չէ որ կը խորհէի. հօրեղբայրս մինակ բոլոր ուշս գրաւած էր: Մեծ թիկնաթուին մէջ ընկղմած, սքանչանալով կը դիտէր ձեռքը բռնած մէկ գիրքը:

« Ի՞նչ գիրք. ի՞նչ գիրք », գոչեց:

Սյս բացաքանչութիւնը միտքս ձգեց որ Լիտէնպրօք ուսուցչապետը՝ հին գիրքերու սիրահար մըն էր, պայմանաւ որ գտած գիրքը մէկ հատիկ ըլլայ կամ գէթ անընթեռնի բան մը:

« Չե՞ս տեսներ ասիկա, ըսաւ ինծի, ամենաթանկագին գանձ մըն է, այս առտու հրեայ Հէվէլիուսի խանութին մէջ գտայ:

— Սքանչելի՛ է », գոչեցի կեղծ եռանդով մը:

Ի՞նչ տեղը կար այդքան աղմուկ ընել հին քառածալի մը համար որու թերթերը դեղնած և կողերը ծածկող կաշին ստորին տեսակէ էր, և արդէն կէս մը փեթուտկած: Սակայն վարպետը չէր դադարել հիանալէ.

« Տե՛ս, կ'ըսէր ինքնիրեն, միեւնոյն ատեն պատասխանելով իր հարցումներուն, բաւական աղուոր չէ՞: Այո՛, շատ սքանչելի է, ի՞նչ ալ սիրուն կազմուած է: Այս գիրքը դիւրաւ կը բացուի՞. այո՛, որովհետեւ ուզած երեսդ բաց է: Լա՛ւ, աղէկ ալ կը գոցուի՞. այո՛, որովհետեւ թերթերն ու կողքը իրարու կը փակին, առանց բաց տեղ մը թողելու: Հապա այս կռնակը, որ

700 տարի է ի վեր չէ ճեղքուած խկ, ի՞նչ աղուոր կազմ է, հիմակուաններուն չի նմանիր»:

Այսպէս խօսելով, հօրեղբայրս կը բանար ու կը գոցէր հինուկ գիրքը: Պարունակութեանը վրայ հարցում ուղղեցի, թէ և հասկնալու փափաք չունէի:

« Ի՞նչ է այն հրաշալի հատորին անունը,

— Թարգմանութիւն մը, պատասխանեց վարպետը ուժգին կերպով, թարգմանութիւն մը, ի՞նչ ընեմ թարգմանութիւնը, Ասիկա նոյն խի բնագիրն է, իսլանտերէն գրուած, այն պարզ ու հարուստ լեզուով որ քերականական այլազան յարակցութիւններ ու բազում փոխաբերութիւններ ունի:

— Գերմաներէնի պէս:



Պ. Լիսենպրոֆ նիհար ու երկայնահասակ մարդ մըն էր

հարցուցի մտադիւր եռանդով մը:

— Ասիկայ, պատասխանեց հօրեղբայրս ոգեւորելով, տասներկուերորդ դարու մէջ նշանաւոր իսլանտացի Սնօրէ Թիւրէլսըն հեղինակին մէկ գործն է Հիմա-Քրիմկլա անունով, իսլանտայի վրայ իշխող նորվեկիացի իշխաններուն ժամանակագրութիւնն է:

— Դրա՛ւ, գոչեցի, կարելի է գերմաներէն թարգմանութիւն մըն է:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս ուսերը թոթուելով, առանց հաշուելու թէ իսլանտերէնը՝ յունարէնի պէս երեք սեռ ունի և յատուկ անունները լատիներէնի պէս կը խոնարհէ:

— Ա՛հ, ըսի՛ անտարբերութիւնս քիչ քիչ խախտելով, այս գրքին տառերը գեղեցիկ են:

— Տառե՛ր, ո՞վ քեզի տառի խօսք ըրաւ,

խեղճ Աքսէլ, ուրիշ՝ հանեցիր այդ տա-
ռերը: Հա՛, կարծեցիր թէ ասիկա տպագ-
րուած է. բայց տգէ՛տ, ձեռագիր է այս,
Ռուսական ձեռագիր մը:

— Ռուսական:

— Այո՛, պիտի հարցնե՞ս հիմայ թէ ի՞նչ
ըսել է այս բառը:

— Բնա՛ւ երբէք », ըսի՝ անձնասիրու-
թիւնը վիրաւորուած մէկու մը պէս:

Բայց հօրեղբայրս շարունակեց անուշու-
թեամբ, և հոգս չըրած բաներս սորվեցուց:

« Ռուսերէնը, ըսաւ, տեսակ մը գրեր
է, որ իսլանտայի մէջ կը գործածուէր, ա-
ւանդութեան մը նայելով՝ անոնց հնարիչը
նոյն իսկ Օտին եղած է: Բայց նայէ՛, սքան-
չացի՛ր, պիղձ դո՛ւ, այս գիրերը որոնք աս-
տուծոյ մը երեւակայութենէն բղխած են »:

Ըսելիք մը չգտնելով կը խոնարհէի, ինչ
որ տեսակ մը պատասխան է ինքնին՝ հա-
ճելի Աստուծոյ և մարդկան՝ քանի որ դա-
նոնք չի շփոթեցներ, երբ դիպուած մը խօ-
սակցութիւնը փոխեց:

Կեղտոտ մագաղաթ մը գրքին մէջէն սա-
հելով գետին ինկաւ: Հօրեղբայրս հասկնա-
լի անյագութեամբ մը վրան ինկաւ: Հին
գիրքի մը մէջ անյիշատակ ժամանակներէ ի
վեր փակուած հին յիշատակագիր մը իր աչ-
քին առջիւ ամենամեծ արժէք մը ունէր:

« Աս ի՞նչ է » գոչեց: Եւ միեւնոյն ժա-
մանակ սեղանին վրայ տարածեց հինգ մատ
երկայն, երեք մատ լայն մագաղաթի կտոր
մը, որու վրայ խառնիճաղանձ նշաններ
գծուած էին: Հոս կը դնեմ անոնց մէկ ճիշդ
օրինակը. կ'ուզեմ որ դուք ալ ճանչնաք այս
անհետեւ գիծերը որոնք Լիտէնպրօք ու-
սուցչապետը ու իր կըրօրորդին՝ տասնեւ-
իններորդ դարու ամէնէն նորանշան ճամ-
բորդութիւնը ընելու մղեցին:

Ճ.ԱՆՐԱԿ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԿՅԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ
ԴԿԻՄԻՄ	ԴԿԻՄԻՄ	ԿԻՄԻՄԻ

Դասախօսը քանի մը վայրկեան գիտեց
գիրերու այս շարքը և ակնոցները վեր վեր-
ցնելով ըսաւ.

« Ռուսերէն է. այս նշանները բոլորովին
նման են Սնօրէ Թիւրէլունի ձեռագրին,
բայց... ի՞նչ կը նշանակեն արդեօք »:

Ես այնպէս կը կարծէի թէ Ռուսերէնը
քանի մը գիտուններուն հնարքն է միայն՝
որպէս զի ուրիշները խաբեն. հետեւաբար
բնաւ չնեղացայ տեսնելով որ հօրեղբայրս
բան մը չի հասկնար:

« Բայց սակայն հին իսլանտերէն է » կը
մըմնար ակռաներուն տակէն:

Պ. Լիտէնպրօք ասանկ բաներէն լաւ կը
հասկնար, որովհետեւ քաջ լեզուագէտ ալ
էր. ըսել չէմ՝ ուղեր թէ աշխարհիս վրայ
խօսուած երկու հազար լեզուները և չորս
հազար գաւառաբարբառները կը ճանչնար,
բայց անոնցմէ շատերուն տիրացած էր, Հե-
տեւաբար՝ այս գիտարութեան հանդէպ իր
բոլոր բարկութիւնը դուրս պիտի թափէր և
փոթորիկի մը փրթելուն կ'սպասէի երբ ժա-
մացոյցը ժամը երկուքը զարկաւ:

Մարթա սենեակին դուռը բացաւ ու ըսաւ.

« Ծաշը պատրաստ է »:

— Սատանին երթայ, գոչեց հօրեղբայրս
ճաշն ալ, եփո՛ղն ալ, ուտո՛ղն ալ »:

Մարթա փախաւ: Ես ալ ետեւէն վա-
զեցի, և չգիտեմ ի՞նչպէս եղաւ, ինքզինքս
ճաշասրահին մէջ սովորական տեղս նստած
գտայ: Քանի մը վայրկեան սպասեցի. վար-
պետը չէր գար: Եթէ լաւ կը յիշեմ առա-
ջին անգամն էր որ սեղանէն բացակայ կը
գտնուէր: Ծաշն ալ ի՞նչ սքանչելի էր. ա-
զատքեղով ապուր, թրթնջուկով ու մշկըն-
կոյզով համեմեալ ժամպօնի օմլէթ, աղան-
դերի համար կարիդոս՝ Մօզէլի ընտիր գինի:

Ահա ի՞նչ բաներէ կը զրկուէր հօրեղ-
բայրս թուղթի կտորի մը համար: Իմ կող-
մէ իբր անձնուէր կըրօրորդի՝ կարծեցի թէ
պարտքս է անոր բաժինն ալ իրեն համար
ուտել, և խղճմտաբար երկուքնուս համար
ալ փորս կշտացուցի:

« Ասանկ բան տեսնուած չունէր, կ'ըսէր
Մարթա, Պ. Լիտէնպրօք սեղան չի գար »:

— Չհաւատալիք բան:

— Հետեւանք գէշ պիտի ըլլայ », կը
կրկնէր ծերուկ սպասուհին գլուխը որորե-
լով, ինծի համար ասոր հետեւանքը ազուր
փոթորիկի մը պիտի ըլլար, եթէ հօրեղբայրս
սեղան իջնար և տեսնէր որ ճաշը լմնցու-
ցեր եմ:

Վերջին կարիդուսը ուտելու վրայ էի, երբ անագնադորդ ձայն մը ճաշի զեղխութենէն ուշաբերեց զիս: Մէկ քայլով ճաշասրահէն աշխատութեան սենեակը նետուեցայ:

Գ.

«Անշուշտ Ռոններէն է, կ'ըսէր դասախօսը, բայց գաղտնիք մը կայ զոր պիտի գտնամ, թէ ո՛չ...»

Ուժգին շարժում մը մտքին ըսածը լրացուց: «Հոգ նստէ, ըսաւ ինծի՝ բռունցքովը սեղանը ցոյց տալով, և գրէ՛»:

Մէկ վայրկեանի մէջ պատրաստ էի:

«Հիմա կ'ստի ըսեմ լատիններէն այբու-բենի բոլոր տառերն որոնք կը համապատասխանեն իւրաքանչիւր իսլանտական տառի. տեսնենք ի՞նչ կ'ըլլայ: Բայց, Աստուծոյ սիրուն, նայէ որ չսխալիս»:

Սկսայ գիրերը մէկիկ մէկիկ գրել, կրցածիս չափ ուշադրութիւն ըրի. գիրերը իրարու ետեւ շարելով անոյն սոյն անհասկնալի բառերը կազմուեցաւ:

Ա	Բ	Գ	Դ	Ա	Ա	Ե	Ո	Լ	Գ	Խ	Ա				
Ա	Ն	Ր	Ո	Ղ	Ո	Ի	Լ	Ի	Ե	Գ	Յ	Ո			
Գ	Խ	Կ	Ա	Ր	Կ	Բ	Գ	Ա	Ս	Դ	Բ	Ր	Օ		
Ս	Ա	Ր	Ե	Ո	Ո	Ի	Գ	Լ	Ե	Ս	Ր	Բ	Ի	Ղ	Ի
Ա	Ի	Ե	Ր	Ա	Ե	Ե	Գ	Լ	Ե	Ս	Դ	Բ	Ի	Գ	Ե
Գ	Ա	Ր	Ե	Ր	Ա	Ե	Ե	Գ	Լ	Ե	Ս	Դ	Բ	Ի	Գ
Ա	Ս	Դ	Բ	Ի	Գ	Ե	Ո	Լ	Գ	Խ	Ա	Ե	Ո	Լ	Գ
Ա	Ս	Դ	Բ	Ի	Գ	Ե	Ո	Լ	Գ	Խ	Ա	Ե	Ո	Լ	Գ

Երբ այս աշխատութիւնը լմացաւ, հօրեղբայրս ձեռքիս թուղթը առաւ և ուշադրութեամբ քննել սկսաւ: «Ի՞նչ կը նշանակէ ասիկա» կը կրկնէր մեքենաբար:

Թարգմ.

ՁԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐՅԱՆ



Գ Ե Ր Ե Չ Մ Ա Ն Ը

Հարուստ ազարական մը՝ օր մը իր դրանն առջեւ կեցած, արտերն ու պարտէզները կը դիտէր. դաշտը ծածկուած էր հունձքերով և ծառերը պտուղներով ծանրաբեռնալ էին: Նախորդ տարիներու ցորենն այնքան դիզուած էր իր ամբարանոցներուն մէջ որ, տախտակամածին գերանները կը ծռէին ծանրութենէն: Գոմերը լի էին եղերով, կովերով և կայտառ ձիերով: Իր սենեակը մտաւ և նայեցաւ այն արկղամուրին, որու մէջ կը պահէր ստակը: Բայց երբ

ինքը իր հարստութիւնները դիտելու զբաղած էր, ականջին ձայն մը եկաւ որ կ'ըսէր. «Այդ ոսկիներով միթէ երջանիկ ըրի՞ր շուրջ գտնուողներն. աղքատներուն չքաւորութիւնը միտքդ բերի՞ր. հացդ անօթիներուն հետ բաժնեցի՞ր. ունեցածովդ գոհացա՞ր և երբեք աւելին ունենալու չի ցանկացի՞ր»:

Իր սիրտը չվարանեցաւ պատասխանելու «Ամէն կերպով անողոք գտնուեցայ, երբէք աղէկութիւն մը չըրի ազգականներուս ու բարեկամներուս: Երբէք Աստուած միտքս չի բերի, այլ միայն հարստութիւնս շատցնել խորհեցայ: Եթէ ամբողջ աշխարհ իմս ըլլար դեռ աւելին ունենալ պիտի ուզէի»:

Այս մտածումն ահաբեկեց զինքը, և ծունգերն սկսան անանկ ուժգին գողալ որ, պարտաւորեցաւ նստիլ: Նոյն միջոցին դուռը զարնուեցաւ: Եկողն իր դրացիներէն մէկն էր, զաւակաց տէր աղքատ մը, որ չէր կըրնար սնուցանել զանոնք:

«Աղէկ գիտեմ որ, ըսեր էր ինքնիրեն, դրացիս այնքան հարուստ, կրկնապատիկ ևս անգութ է. ապահով եմ որ զիս պիտի վռնուէ, բայց տղաքս հաց կ'ուզեն. սէտք է անգամ մը փորձեմ»:

Հարուստին ըսաւ. «Գիտեմ որ դուք չէք սիրեր մարդու ողորմութիւն տալ, բայց ես ձեզի կը դիմեմ, որովհետեւ յուսահատական վիճակի մէջ եմ. ինչպէս որ խեղդուող մարդ մը օձին կը պլլուի. տղաքս անօթի են. չորս գոռ ցորեն փոխ տուէ՛ք ինձ»:

Գթութեան ճառագայթ մը առաջին անգամ ըլլալով հալեցուց այս ազահ սրտին սառոյցը: «Չորս գոռ չպիտի տամ, պատասխանեց, այլ ութը, բայց պայմանաւ»:

— Ի՞նչ է, հարցուց աղքատը:

— Մեռնելուս առաջին երեք գիշերները գերեզմանիս վրայ պէտք է հսկես»:

Այս առաջարկութիւն չատ հաճոյ չէր խեղճ մարդուն. բայց կարօտութեան մէջ ըլլալով՝ խոստացաւ և ցորենը տուն տարաւ:

Կարծես թէ ազարականն ապագայն գուշակեր էր, վասն զի երեք օր ետքը մէմէն ի մէկ մեռաւ, և ոչ ոք ցաւեցաւ անոր վրայ: Երբ մարմինը թաղեցին, աղքատն իր խոստումը յիշեց. չէր ուզեր զայն կատարել. բայց ինքնիրեն ըսաւ. «Այս մարդն առատաձեռն գտնուեցաւ իմ մասին և իր

հացոյն իմ տղաքս կերակրեց. ասկից զատ խօսք տուի եւ պէտք է խօսքս պահեմ» :

Իրիկուան գերեզմանատուն գնաց եւ գերեզմանին վրայ նստաւ : Ամեն բան հանդարտ էր, լուսինը գերեզմանները կը լուսաւորէր, եւ մերթ ընդ մերթ բու մը կը թռչէր՝ աղետաբեր ճիչեր արձակելով : Երբ արեւը ծագեցաւ, անվտանգ տուն դարձաւ. երկրորդ գիշերն ալ առաջնոյն պէս անցաւ :

Երրորդ աւուր գիշերը ներքին երկիւղ մը զգաց, անանկ մը որ կարծես թէ բան մը պիտի պատահէր : Գերեզմաննոց մտածատենը պատին քով շուրջ քառասուն տարու մարդ մը տեսաւ, ցտեալ դէմքով եւ հրավառ աչքերով : Հին վերարկուի մը մէջ բաթթուած, որու տակէն ձիաւորի երկար կօշիկները կը տեսնուէին միայն : « Ի՞նչ կը փնտռէք հոս, գոչեց գիւղացին անոր, չէ՞ք վախնար այս գերեզմանատան մէջ :

— Բան մը չեմ փնտռեր, պատասխանեց միւսը, եւ ի՞նչ կայ վախնալու : Ես զինուոր եմ եւ գիշերը հոս պիտի անցընեմ :

— Լա՛ւ ուրեմն, ըսաւ գիւղացին, քանի որ չէք վախնար, եկէ՛ք օգնեցէ՛ք ինձ սա գերեզմանին վրայ հսկելու :

— Յօժարութեամբ, պատասխանեց զինուորը. պահակութիւնը իմ արուեստս է : Միասին կենանք եւ ինչ որ ալ ըլլայ, աղէկ կամ գէշ, չի գատուինք իրարմէ » :

Երկուքն ալ նստան գերեզմանին վրայ : Մինչեւ կէս գիշեր ամէն բան հանդարտ մնաց : Կէս գիշերին օդին մէջէն սաստիկ աղմուկ մը լսուեցաւ, եւ երկու պահակներն իրենց դէմ տեսան սատանան : « Դուրս ելեք, սրիկայնէ՛ր, գոչեց անոնց, այս մեռեալն իմն է, պիտի առնեմ զայն, եւ եթէ անմիջապէս երթալու չըլլաք, վզերնիդ կը բռնենք » :

— Եղջիւրաւոր տէ՛ր. դուք իմ հարիւրապետս չէք, չեմ կրնար ձեր հրամանին հնազանդիլ եւ ձենէ ալ չեմ վախնար : Ծառաբանիդ գացէ՛ք, մենք հոս պիտի կենանք :

Սատանան մտածեց որ գուցէ ստակ տալով համոզէ՛ այս երկու թշուառականներն, ուստի անուշ ձայնով եւ ընտանեբար հարցուց անոնց թէ, եթէ ոսկիով լեցուն քսակ մը տայ իրենց, կը հաւանի՞ն հեռանալ : « Այդ աղէկ, յարեց զինուորը, բայց մէկ քսակը չի բաւեր մեզ, պէտք է կօշիկներէս

մին ոսկիով լեցնէք որ երթանք ասկից » :

— Այդչափ ոսկի չունիմ վրաս, ըսաւ սատանան, բայց երթամ բերեմ : Հոս մօտերս վաշխառու մը կայ, կրնամ այդ գումարը փոխ առնել իրմէ » :

Երբ սատանան գնաց, զինուորը կօշիկը հանեց ըսելով. « Հիմա աղուոր խաղ մը պիտի խաղամ իրեն, վարպէ՛տ, դանակդ ինձի տուր » : Կօշիկին ներքանը կտրեց եւ կօշիկը դրաւ բարձր խոտերուն մէջ, գերեզմանի մը կռթնքներով : « Աղէ՛կ, ըսաւ, հիմայ թող գայ տեսնեմ » :

Երկար ատեն չսպասեցին. սատանան եկաւ, հետը բերելով փոքրիկ տոպրակ մը ոսկի. « Լեցուցէ՛ք, ըսաւ զինուորը, կօշիկը քիչ մը վեր վերցնելով, բայց կարծեմ աս չպիտի բաւէ » :

Սատանան տոպրակը պարպեց, բայց ոսկին գետինն ինկաւ եւ կօշիկը պարապ մնաց : « Ապո՛ւշ, գոչեց զինուորը, ես չըմբօ որ ասիկա բաւական չէ : Գնա՛ նորէն բեր » :

Սատանան գլուխը շարժելով գնաց եւ ժամէ մը եկաւ աւելի մէծկակ տոպրակ մը բերելով : « Այդ քիչ մ'աղէկ է, բայց դարձեալ չեմ յուսար որ կօշիկս լեցնէ » :

Ոսկին պարպուեցաւ, բայց կօշիկը պարապ մնաց : Սատանան հրավառ աչքերով մէջը նայեցաւ ու ըսաւ. « Ի՞նչ խոշոր ոտքեր ունիս եղեր » :

— Կ'ուղէիր որ քեզի պէս այծի ոտքե՞ր ունենամ, պատասխանեց զինուորը : Բայց դուն աղա՛ չէիր. օ՛ն, գնա՛ նորէն ստակ բեր. ապա թէ ո՛չ, սկէց հունա չեմ երթար » :

Անիծեալը նորէն գնաց : Այս անգամ աւելի երկար ատեն բացակայ գտնուեցաւ եւ երբ վերադարձաւ, ուսին վրայի ահագին տոպրակին ծանրութեանը ներքեւ կ'ընկձէր, ի գուր պարպեց զայն կօշիկին մէջ, չի լեցաւ : Այն ատեն բարկացաւ, եւ կօշիկը պիտի քաշէր զինուորին ձեռքէն, երբ ծագող արեւին առաջին ճառագայթն եկաւ երկիրը լուսաւորել : Անմիջապէս սատանան աներեւութացաւ՝ աղաղակ մը արձակելով : Խեղճին հոգին փրկուած էր :


Գիւղացին ուղեց ստակը բաժնել, բայց զինուորը ըսաւ. « Իմ բաժինս աղքատներուն տուր, ես քու տունդ պիտի գամ, եւ մնացեալովն հանգիստ կ'ապրինք, որչափ ատեն որ Աստուած կամի » :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը երառարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին									
4. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ			✠	ՀԱՍՑԷ		✠	ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ		
Տարեկանը	40	դահեկան	✠	ՆՇԱՆ 4.	ՊԵՐՊԵՐԵԱՆ	✠	Տարեկանը	45	դահեկան
Վեցամսեան	20	»	✠			✠	Վեցամսեան	25	»
Եռամսեան	10	»	✠		4. ՊՈԼՍՈ	✠	Եռամսեան	12 1/2	»
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ			✠ <th colspan="2">ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ</th> <th>✠<th colspan="3">ՕՏԱՐ ԵՐԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ</th></th>	ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ		✠ <th colspan="3">ՕՏԱՐ ԵՐԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ</th>	ՕՏԱՐ ԵՐԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ		
Տարեկանը	4	ըռպլի	✠		ԹԻԼ 61	✠	Տարեկանը	10	ձրանը

Չեռէ կը ծախուի հասար 40 վարալ:

Ձեռքէ կը ծախուի հաար 40 փարայ

ԽՈՐԱՆԱՐԴՆԵՐՈՒ ԽԱՂԸ



Ահաւասիկ խորաւ վրայ դրուած խորանարդներ, սենեակին մէկ անկիւնը, տախտակամածին վրայ, ինչպէս որ կը տեսնուի պատկերին մէջ: Քանի՞ հատ են այդ խորանարդները:

Եթէ վերի կողմէն դիտէք խորանարդները, վեց հատ պիտի երեւին ձեր աչքին. մէկ խորանարդ՝ առաջին կարգին վրայ, երկու խորանարդ՝ երկրորդ կարգին վրայ եւ երեք խորանարդ՝ երրորդ կարգին վրայ, իւրաքանչիւրին վերի մասերը սեւ, ու աջ կողմերն ձերմակ ըլլալով:

Եթէ հակառակ դիրքի մէջ նկատէք խորանարդները, այն ատեն անոնք եօթը հատ պիտի երեւին. երկու հատ առաջին կարգին վրայ. երեք հատ երրորդ կարգին վրայ եւ երկու հատ երրորդ կարգին վրայ: Այս անգամ ամէն մէկ խորանարդին յատակը սեւ ու ձախ կողմը ձերմակ պիտի կըլլայ:

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

4. ԲԱՌԱԽԱՂ


Իմ առաջինս չոր ու ճերմակ, ետքինս հեղուկ ու դեղնորակ, Երկուքս մէկէն պինդ հարկաւոր Ուտիլիք են սքնընդաւոր: Բայց բերնէս հանածն ուտես, Գողիաթի պէս հող կը պագնես:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

5. Ինչո՞ւ ամառը բաց գոյն, իսկ ձմեռը սեւ հագուստներ հագնելու է:

6. Քրտնած ժամանակ ինչո՞ւ հոգին կենալու չէ. — (Պատասխանները որչափ հակիրճ ըլլան՝ այնքան նախընտրելի են):

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ



Դպրոցի մը բոլոր տղայք կրնան այս խաղին մասնակցիլ: Նախ իրարու մէջ վիճակ կը ձգեն եւ շահողը պէտք է որ բռնէ չուանի մը ծայրէն բաւական մեծ քառաչուէ գնտակ մը: Նշանը տրուելուն պէս, տղայք խմբովին կը վազեն պարտէզին կամ դաշտին մէջ, եւ այն տղան որ գնտակը ձեռքը բռնած է, պիտի փնտռէ իր ընկերները հալածել ամենայն կանոնաւորութեամբ: Եթէ յաջողի, առանց չուանը ձեռքէն ձգելու, գնտակն իր ընկերոջ մարմնոյն ո՛ր եւ է մասին հանդըպնել, ինք կ'անցնի արշաւողներու կարգին մէջ եւ չուանն ու գնտակը կը յանձնէ բրունած տղուն. ասիկա ալ իր կարգին կ'սկսի հալածել ընկերները:

Խաղին գլխաւոր պայմանն է չուանը ձեռքէն չի ձգել եւ շարունակաբար մէկ տըղուն մը ետեւէն չի վազել: Ո՛վ որ չուանը ձեռքէն փախցնէ, խաղէն դուրս կ'ելլայ:

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՄԲԱԴՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱՆԻՉ

Ն. ՇԱՆ. Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ

THE HISTORY OF THE
CITY OF BOSTON
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME

The city of Boston, situated on a neck of land between the harbor and the bay, was first settled in 1630 by a company of Puritan emigrants from England. The settlement was founded by John Winthrop, who was elected governor of the colony. The city grew rapidly, and by 1690 it had become one of the largest and most important cities in New England. The city was the center of the American Revolution, and it was here that the first battle of the war was fought. The city was also the site of the first public school, the first library, and the first hospital in the colony. The city was the home of many of the most famous Americans, including John Hancock, Paul Revere, and Samuel Adams. The city was the site of the first public execution, and it was here that the first public execution was held. The city was the site of the first public execution, and it was here that the first public execution was held.

The city of Boston, situated on a neck of land between the harbor and the bay, was first settled in 1630 by a company of Puritan emigrants from England. The settlement was founded by John Winthrop, who was elected governor of the colony. The city grew rapidly, and by 1690 it had become one of the largest and most important cities in New England. The city was the center of the American Revolution, and it was here that the first battle of the war was fought. The city was also the site of the first public school, the first library, and the first hospital in the colony. The city was the home of many of the most famous Americans, including John Hancock, Paul Revere, and Samuel Adams. The city was the site of the first public execution, and it was here that the first public execution was held.

Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶՍ.ՊԹԻԷ ԶԱՏՏԵՍԻ, ԹԻԻ 61.

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ պատրաստ է տպագրել ամենայն խնամօք եւ մաքրութեամբ պատկերազարդ եւ թէ՛ առանց պատկերի Թուրքերէն, Հայերէն եւ Ֆրանսերէն լեզուաւ Հանդէսք, Դասագրեանք, Տեղեկագիրք, Հաշուէցոյցք, Շրջաբերականք, Հարսանեաց հրաւիրագիրք, Նամակազուխք, Այցաքարտք, Մահազք, Էայլն:

Տպարանս պատրաստ ունի ԶԶԶԶէ աւելի բնագիտական, բնապատմական, մարմնամարզական, Ս. Գրոց պատմութեան եւ ամէն տեսակ դասագրեանց յարմար պատկերներ, որոնք ձրի կը տրուին այն Հեղինակաց ու թարգմանչաց՝ որոց գործերն կը յանձնուին իրեն, ու պէտք եղածներն ալ կը փորագրուին ամենայն նրբութեամբ:

Գոհացուցիչ եւ չափաւոր գին:

Կը խնդրուի Մեծ. Հեղինակներէն եւ տպագրութեան վերաբերեալ գործ ունեցողներէն որ նախապէս ուղղակի տպարանս դիմեն՝ առանց դրսէն ո՛ր եւ է միջնորդի, որոց շահելիքն ալ իրենք կը վաստակին:

Գաւառներէն եղած յանձնարարութիւնք ճշգրտութեամբ եւ խնամքով կը կատարուին՝ եթէ արժէքը տրուած հրամանին հետ շրկուի:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ա. Կ. Կ. Մարգուան. — 13 եւ 19 ամսաթիւ նամակնիդ միասին ստացանք, ներփակեալներն իրենց հասցէին տրուեցան:

Մեր խօստացածները կը շրկենք: Զատ նամակ կ'ընդունիք, Խորին շնորհակալութիւն:

Յ. Ղ. Նիկոսիդիա. — Շնորհակալութիւն ձեր առաջարկին համար, բայց Բուրասանի համակիր ու հին բարեկամներէն մին ստանձնած է նոյն պաշտօն:

Ա. Ա. Քհ. Դ. — Նամակնիդ ստացանք, Շնորհակալութիւն:

Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար դիմել մինակ սոյն հասցէին

نشانه بربریان مطبعه عی

استانبول اسکی ضعیفه جاده سی نومرو ۶۱

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Էսկի Զապրիյէ Զատտէսի քիւ 61

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Eski Zabtiyé Djaddéssi N. 61

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

ՀԵՂԻՆԱԿ

ՍԻՄՕՆ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ

(ԺԻՐԱՏՐ ՇԻՐԱԿԱՑԻ)

Անհրաժեշտ ամէն վաճառականի, գրադրի եւ առուսուրով գրադողներու:

Գին Բ. Հատորի 1 Ձ շրջ. — Կանխիկ վճարողներու համար զեղչ 15 %:

Դիմել ԹերթիՍ հասցէին

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն) 4

Նոր » » » 4

Ծաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.) 3

Ֆրանսերէն պատկերազարդ Գերական 2

Կ. Տէմիրեան էֆ. Իրագիտութեան

Ամբողջական դասընթացքը:

Ծաղկաքաղ եկեղեցական պատմութեան 4

Բրիտոննէական (Ս. Խանճեան) 2

Ժողովրդական Տարեցոյց 6

Բուրաստան Մանկանց (Տարեկանը) 10

Աղօթագիրք 10

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատոր 40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ: